

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):**

ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

**Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց
համայնքանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Мащтоц г.Степанакерта**

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Խ.Յ.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ծ.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ր.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

**© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016**

**ԼԵՌԱՎԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍՔ ԻՐԱԿԱՆՑՎԱԾ ՀԱՆՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔԸ**

Լուսինե ԲԱՐԽՈՒԴՅԱՆՐՅԱՆ

Արցախի պետական համալսարանի
իրավունքի ամբիոնի մագիստրանտ
barkhudaryan.lusine@gmail.com

Գիտական դեկանար՝ ԼՂՅ արդարադատության նախարար,
ի.գ.թ. Ա.Դանիելյան

2016 թվականի ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում տեղի ունեցած իրադարձությունները պատմության մեջ կմնան որպես քառօրյա պատերազմ։ Այդ օրերին տեղի ունեցածը, թե՛ ռազմական գործողությունների ծավալով, թե՛ կիրառված գենքի ու զինտեխնիկայի քանակով, իրապես կարելի է պատերազմ համարել։

Ցավալի է, քայլ փաստ, որ 2016 թվականի ապրիլի 2-ին ԼՂՅ նկատմամբ Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիան ուղեկցվել է մարդու իրավունքների զանգվածային խախտումներով, ընդորում, ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ հակամարտող կողմից անմարդկային արարություն առաջին զոհերը քաղաքացիական անձինք¹ են։

Այսպիսով՝ պարզելու համար, թե միշագային ինչպիսի իրավանորմեր են խախտվել Ադրբեջանի կողմից և ինչպիսի մեխանիզմներ են հարավոր գործադրել այդ իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանելու համար, անհրաժեշտ է, նախ և առաջ, իրավական ճիշտ ընորոշում տալ դարաբաղա-ադրբեջանական հակամարտությանը։ Ցատկանշական է, որ մասնագետները միասնական մոտեցում չունեն այս հարցի շուրջ։ Նրանց մի մասը գտնում է, որ գործ ունենալու միշագային բնույթը չկրող, իսկ մյուս մասը՝ միշագային բնույթը կրող զինված ընդհարման հետ։ Ըստ իս, դարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը կրում է միշագային բնույթը, ինչը պայմանավորված է այս հանգամանքով, որ

¹ Ցանկացած անձ, որը չի պատկանում զինված ուժերի թվին, հանդիսանում է քաղաքացիական։ /Միշագային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի ԺՄԿի կոնվենցիայի առաջին արձանագրություն*, հոդված 50 (*ԺՄԿի կոնվենցիաները և նրան կից արձանագրությունները կազմում են միշագային իրավունքի ճյուղերից մեկի՝ միշագային մարդասիրական իրավունքի առանցքը, որը կարգավորում է զինված հակամարտությունների վարումը և ձգտում է սահմանափակել նրա հետևանքները։ Կոնվենցիաները, մասնվորապես, պաշտպանում են ռազմական գործողություններին չմասնակցող անձանց, ինչպես նաև այս անձանց, որոնք դադարել են մասնակցել ռազմական գործողություններին։)

միջազգային գինված ընդհարման գոյությունը դիտարկվում է որպես երկու պետությունների ուժերի միջև գինված բախումներից բխող օբյեկտիվ գործոն՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես կբնորոշեն բախումները կողմերը¹: Միաժամանակ, միջազգային բնույթ կրող գինված ընդհարման գոյությունը պայմանավորված է հակամարտող կողմերի իրավական կարգավիճակով և նրանց միջև առկա հակամարտության բնույթով: Ըստ այդմ, գինված ընդհարման միջազգային բնույթը պայմանավորված է ընդհարման՝ Բարձր պայմանավորող կողմերի միջև տեղի ունենալուց: Ըստ որում, միջազգային բնույթը կրող գինված ընդհարումը գոյություն ունի այն պահից սկսած, եթե պետությունն մեկ այլ պետության դեմ օգտագործում է գինված ուժեր՝ անկախ հակամարտության պատճառներից կամ իստեսափությունից, ինչպես նաև նրանից՝ պատերազմը պաշտոնապես հայտարարվել է, թե՝ ոչ²:

Այժմ անդրադառնանք 2016 թվականի ապրիլի 2-5-Ն ընկած ժամանակահատվածում ԼՂՀ քաղաքացիական բնակչության³ նկատմամբ աղբեջանական կողմի թույլատրած ինչպես միջազգային հանրային, այնպես էլ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներին: Այսպես, ռազմական գործողությունների վերսկսման առաջին օրը՝ 2016 թվականի ապրիլի 2-ին, ժամը 08:40-Ի սահմաններում, Աղբեջանի Յանրապետության գինված ուժերը, հրթիռային կայանքի կիրառմամբ հրետանակոծել են Մարտունու շրջանի Չորավան բևակավայրը, ինչի արդյունքում մեկ երեխա մահացել է, իսկ երեք երեխա՝ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ⁴: Վերոթվագրյալ իրավախախտումները վկայում են այն մասին, որ աղբեջանական կողմը խախտել է մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի բազմաթիվ դրույթներ, մասնավորապես՝ «Միջազգային գինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-Ի ԺՆԿ կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրության⁵» 35-րդ, 51-րդ, 52-րդ հոդվածները, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Տնտեսական, սոցիալական և մշակութային

¹ Принципы права вооруженных конфликтов: Курс лекций, прочитанных на юридическом факультете Открытого Брюссельского университета, М.: Международный Комитет Красного Креста, 2011, Ез 117:

² International Humanitarian Law: A Comprehensive Introduction, ICRC, 2016, Էջ 55-57:

³ Քաղաքացիական բնակչությունը բաղկացած է քաղաքացիական անձ հանդիսացող բոլոր անձանցից: /Միջազգային գինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-Ի ԺՆԿ կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրության/ 35-րդ, 51-րդ, 52-րդ հոդվածները, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածը, «Տնտեսական, սոցիալական և մշակութային

⁴ <http://www.genprocnkr.am/2011-02-18-09-13-34/2011-02-18-09-17-55>:

⁵ Յարկ է նշել, որ Աղբեջանի Յանրապետությունը չի վավերացրել Միջազգային գինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-Ի ԺՆԿ կոնվենցիաների 1-ին լրացուցիչ արձանագրությունը: /https://www.icrc.org/aplic/ihl/ihl.nsf/States.xsp?xp_viewStates=XPages_NORMStatesParties&xp_treatySelected=470/

իրավունքների¹» միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածը, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի² 6-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2³ հոդվածը, «Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրի⁴» 3-րդ հոդվածը:

Բացի այդ, Ադրբեյջանի Հանրապետության գինված ուժերը, կիրառելով պատերազմ Վարելու արգելված միջոցներ և մեթոդներ, ոչ ընտրովի օրինակ դարձնելով խոր թիկունքում գտնվող քաղաքացիական ընակչությանը, 2016 թվականի ապրիլի 2-ի լույս 3-ի գիշերը, Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում առանձին դաժանությամբ ապօրինի կյանքից գրկել են 1956 թվականին ծնված Շազմելլա Կարդանյանին, 1951 թվականին ծնված Վալերիկ Խալաֆյանին, ինչպես նաև 1924 թվականին ծնված Մարտույա Խալաֆյանին⁵: Վերոգրյալ վայրագություններն իրականացնելու ժամանակ թշնամու կողմից խախտվել են բազմաթիվ միջազգային իրավական ակտեր, մասնավորապես՝ «Միջազգային գինված ընդհարումների գոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի ժողովի կողմէն կոնվենցիանու 1-ին լրացուցիչ արձանագրության» 15-րդ հոդվածը, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2³ հոդվածը, «Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրի» 3-րդ հոդվածը, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 10-րդ, 15-րդ հոդվածները⁶:

Այսպիսով՝ ապրիլյան քաօրյա պատերազմի ժամանակ թշնամու կանխամտածված վայրագ գործողությունների արդյունքում սպանվել են 4 խաղաղ ընակիններ: Քաղաքացիական ընակչության նկատմամբ իրականացված վայրագությունները Միջազգային քրեական դատարանի Յորմի կանոնադրությամբ նախատեսված միջազգային գինված ընդհարումների

¹ 2015 թվականի ապրիլի 20-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրիր վավերացնելու մասին օրենքը»:

² ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1992 թվականի նոյեմբերի 26-ին ընդունել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրին» և դրան կից ֆակուլտատիվ արձանագրությանը միանալու մասին» թ. 0131-1 որոշումը:

³ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1992 թվականի նոյեմբերի 26-ին ընդունել է «Մարդու իրավունքների համընդիանուր հռչակագրին միանալու մասին» թ. 0131-1 որոշումը:

⁴ <http://www.genprocnkr.am/2011-02-18-09-13-34/2011-02-18-09-17-55>:

⁵ Խախտվել են նաև միջազգային մարդասիրական իրավունքի սովորության նորմերը, մասնավորապես՝ 11-րդ, 87-րդ, 88-րդ, 89-րդ, 90-րդ, 91-րդ, 135-րդ, 138 րդ նորմերը: /Customary International Humanitarian Law; Volume I: Rules; Jean-Marie Henckaerts and Louise Doswald-Beck; Cambridge University Press; 2005/:

Ժամանակ կիրառվող օրենքների և սովորույթների լուրջ խախտումներ են հանդիսանում¹:

Այժմ անդրադառնակը այն հարցին, թե միշագգային ինչպիսի ատյան-ներ կարող են դիմել ապրիլյան քաօրյա պատերազմի ժամանակ թշնամու կանխամտածված վայրագ գործողությունների արդյունքում սպանված և վիրավորված քաղաքացիների հարազատները՝ իրավական պաշտպանության և ադրբեջանական կողմին պատասխանատվության ենթարկելու համար։ Այսպես՝ Ադրբեջանի սանձարձակ գործողությունների հետևանքով տուժած քաղաքացիական անձինք իրավական պաշտպանության նպատակով կարող են դիմել Մարդու իրավունքների Եվրոպական դատարան²։ Ըստ որում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» դրույթները կարող են կիրառելի լինել Թալիշում սպանված և վիրավորված քաղաքացիական անձանց նկատմամբ, քանի որ այն, թեկուզ կարծ ժամանակահատվածում, բայցևայնպես, գտնվել է ադրբեջանական կողմի վերահսկողության ներք:

Ադրբեջանին պատասխանատվության կարող է ենթարկել նաև Միշագգային քրեական դատարանը։ Այս դեպքում կարող է հարց ծագել, արդյոր Միշագգային քրեական դատարանի իրավասությունը տարածվում է այն երկների վրա, որոնք ո՛չ ստորագրել, ո՛չ էլ վավերացրել են Յոռմի կանոնադրությունը³։ Այս, Միշագգային քրեական դատարանը Ադրբեջանի կողմից կատարած հանցագործությունները քննելու նկատմամբ իրավասություն է ձեռք բերում Յոռմի կանոնադրության⁴ 13-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի և 15-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ Անվտանգության խորհրդի միջնորդող բանաձևի միջոցով՝ այս դեպքում, եթե Ադրբեջանի կողմից կատարված հանցագործությունները Յոռմի կանոնադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն որակվեն որպես պատերազմական հանցագործություններ։ Այս պարագայում անհրաժեշտ է

¹ Խոսքը վերաբերում է Յոռմի կանոնադրության 8-րդ հոդվածով նախատեսված պատերազմական հետևյալ հանցագործություններին՝ պատերազմական հանցագործություն դիտավորյալ սպանության ձևով (8(2)(a)(i)), խոշտանգման ձևով (8(2)(a)(ii)), դիտավորյալ ծանր տարապատճեներ պատճառելու ձևով (8(2)(a)(iii)), գույքի ոչչացման և յուրացման ձևով (8(2)(a)(iv)), քաղաքացիական թափակելության վրա հարձակմելու ձևով (8(2)(b)(i)), քաղաքացիական օրյեկտների վրա հարձակմելու ձևով (8(2)(b)(ii)), անհամաշաբ պատահական մահ, խեղվածք կամ վլաս պատճառելու ձևով (8(2)(b)(iv)), պահպանող օրյեկտներին հարվածներ հասցելու ձևով (8(2)(b)(ix)), խեղվածքներ հասցելու ձևով (8(2)(b)(x)), մարդու արժանապատվության դեմ ոտնձգության ձևով (8(2)(xxi))։

² Ըստ որում, դատարան կարող են դիմել ինչպես գոհերի հարազատները՝ դեկավարվելով՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի» 34-րդ հոդվածով, այսպես Է՝ ԼՂՀ-Ն՝ դեկավարվելով նույն կոնվենցիայի 33-րդ հոդվածով։

³ https://asp.icc-cpi.int/en_menus/asp/states%20parties/Pages/the%20states%20parties%20to%20the%20rome%20statute.aspx#

⁴ https://asp.icc-cpi.int/iccdocs/asp_docs/Publications/Compendium/RomeStatute-ENG.pdf/

դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ՝ միջնորդող բանաձև ընդունելու և դրա հիման վրա Միջազգային քրեական դատարան Աղրբեջանին պատասխանատվության Ենթարկելու նպատակով դիմում ներկայացնելու համար:

Լուսինե Բարիսուդարյան

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍՔ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՆՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊՐԻԼՅԱՆ
ԻՐԱՇԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔԸ**

**Բանալի բառեր՝ ղարաբաղա-աղրբեջանական հակամարտություն,
քաղաքացիական բնակչություն, խախտումներ, պատերազմական հանցա-
գործություններ, միջազգային ատյաններ**

Անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի եզրույթ հետագայում կօգտագործվի 2016 թվականի 2-5-ն ընկած ժամանակահատվածում աղրբեջանական կողմից իրականացրած վայրագությունները ընորոշելու համար, դա ամենափափառ է չն փոխի այդ արարքների բովանդակությունը: Միանշանակ, աղրբեջանական կողմից քաղաքացիական բնակչության նկատմամբ կատարած հանցագործությունները պիտի դատապարտվեն միջազգային հանրության և միջազգային դատական ատյանների կողմից: Այլապես՝ նրա վարքագիծը խթան կիանդիսանա անմարդկային ու քրեածին վարքագիծի արմատավորման համար՝ լուրջ վտանգ հանդիսանալով քաղաքակիրությունների բնականոն զարգացման համար: Կցանկանայի, որպեսզի աղրբեջանական կողմը ոչ միայն չմոռանար, այլև՝ հետամուտ լիներ այն սկզբունքի կյանքի կոչմանը, ըստ որի՝ նույնիսկ պատերազմները սահմաններ ունեն:

Лусинэ Бархударян

**ПРЕСТУПЛЕНИЯ СОВЕРШЕННЫЕ ПРОТИВ ГРАЖДАН
НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ В СВЕТЕ
АПРЕЛЬСКИХ СОБЫТИЙ**

Ключевые слова: карабаха-азербайджанский конфликт, гражданская
лица, нарушения, военные преступления, международные трибуналы

В независимости от того, какой термин в будущем будет использоваться для того, чтобы охарактеризовать зверские поступки совершенные азербайджанской стороной со 2-ого по 5-ое апреля 2016 года, это не изменит содержание этих действий. Несомненно, преступления совершенные азербайджанской

стороной против гражданских лиц, должны быть осуждены международным сообществом и международными судебными органами, в противном случае, его поведение будет способствовать созданию бесчеловечного и преступного поведения, и послужит серьезной угрозой для нормального развития цивилизованных стран. Хотелось бы, чтобы Азербайджан ни только ни забывал, ну и следовал предписаниям принципа о том, что даже у войн есть пределы.

Lusine Barkhudaryan

CRIMES AGAINST THE CITIZENS OF THE NAGORNO-KARABAKH REPUBLIC IN THE LIGHT OF THE APRIL EVENTS

Keywords: *karabakh-azerbaijani conflict, civilians, violations, war crimes, international instances*

Regardless, which term will be used in the future in order to characterize the atrocious acts committed by the Azerbaijani side from 2-5 April 2016, it, anyway, will not change the content of these acts. Definitely, the crimes committed by the Azerbaijani side against civilians should be condemned by the international community and international judicial authorities; otherwise, its behavior will contribute to the deepening of inhuman and criminal behavior, representing serious threat to the regular development of the civilized countries. I would like Azerbaijan not only to forget, but also to follow the principle, according which, even wars have limits.